Սույն ձեռնարկը հրապարակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի պահանջների: Այն կազմվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա:

Սույն ձեռնարկը կօգնի Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների վստահված անձանց պատշաճ կատարելու իրենց պարտականություններն ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում:

ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները (այսուհետ՝ ընտրություններին մասնակցող կուսակցություններ) ընտրական ցուցակները գրանցելուց հետո ընտրական հանձնաժողովներում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ վստահված անձինք:

Ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակները գրանցելուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրանցում իրականացրած ընտրական հանձնաժողովը ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցչին տալիս է կազմավորված ***ընտրական տեղամասերի թվի եռապատիկին հավասար*** թվով վստահված անձանց վկայականներ:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ վստահված անձանց վկայականները տրամադրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ վկայականում նշելով ընտրություններին մասնակցող կուսակցության անվանումը: Ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը վկայականները լրացնում և տրամադրում է վստահված անձանց:

Վստահված անձ կարող են լինել միայն Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները:

Վստահված անձ չեն կարող լինել՝

- դատավորները,
- դատախազները,
- քննչական մարմիններում ծառայողները,
- ոստիկանությունում,
- ազգային անվտանգության ծառայությունում,
- դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական ծառայությունում,
- պրոբացիայի ծառայությունում,
- փրկարար ծառայությունում ծառայողները,
- զինծառայողները, դիտորդները, թեկնածուները,
- ընտրական հանձնաժողովների անդամները:

ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վստահված անձն իրավունք ունի՝

- **խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին, քվերարկության ընթացքում ներկա լինելու քվեարկության սենյակում:**

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ

մինչև երկու վստահված անձ

Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները **չեն կարող ունենալ վստահված անձ:**

Վստահված անձն ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա լինել, եթե ունի վստահված անձի վկայական:

! Վստահված անձը պարտավոր է վստահված անձի իր վկայականը տեսանելի ձևով կրել վերնազգեստի վրա:

Հանձնաժողովի նախագահն **ԱՐԳԵԼՈՒՄ Է** ընտրական հանձնաժողովներում, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում ներկա լինելու այն վստահված անձանց, ովքեր չունեն համապատասխան իրավունք:

Հանձնաժողովի նախագահը դուրս է հրավիրում այն վստահված անձանց, ովքեր ունեն քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք, սակայն վերնազգեստի վրա տեսանելի ձևով չեն կրում համապատասխան վկայական:

Քվերակության օրը տեղամասային կենտրոն (քվեարկության սենյակ) վստահված անձի այցելության դեպքում համապատասխան գրառում է կատարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում (նշվում է վստահված անձի անունը, ազգանունը (նշելով թե ում վստահված անձն է հանդիսանում), տեղամաս մուտք գործելու և տեղամասից հեռանալու ժամը):

Վստահված անձն իրավունք ունի՝

- **ծանոթանալու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, տարածքային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին և ինքնուրույն կատարելու քաղվածքներ, ստանալու պատճեններ այն փաստաթղթերից, որոնք տեղադրված չեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:**

Վստահված անձն իրավունք ունի՝

- **տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ծանոթանալու տեղամասային ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին (բացառությամբ քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների), դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողին տրամադրած լիազոր մարմնի համապատասխան տեղեկանքին, ինչպես նաև քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին:**

Վստահված անձն իրավունք ունի՝

- **չմիջամտելով ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և չխաթարելով քվեարկության ընթացքը՝ ինքնուրույն կատարելու քաղվածքներ և նշումներ ընտրական փաստաթղթերից (բացառությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների, քվեարկության կտրոնների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից:**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների ամփոփման, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների վերահաշվարկի գործընթացը կազմակերպում են այնպես, որ վստահված անձինք հնարավորություն ունենան հետևել քվեաթերթիկների վավերականության որոշման, քվեաթերթիկների տեսակավորման, քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:

Վստահված անձն իրավունք ունի՝

- **լուսանկարահանել, տեսանկարահանել ընտրական հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև քվեարկության ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը և քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:**

Քվեարկության ընթացքում քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակներից և քվեարկության կտրոններից քաղվածքներ և նշումներ կատարելն արգելվում է:

Ընտրողների ստորագրած ցուցակները չեն կարող լուսանկարահանվել և տեսանկարահանվել:

Վստահված անձն իրավունք ունի՝

- **Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և դեպքերում բողոքարկելու ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը:**

Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Դիմումը հասցեագրվում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը: Եթե դիմում տալու համար օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն մինչև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով:

Դիմումը պետք է՝

1. ստորագրված լինի դիմողի կողմից,
2. ներառի դիմողի անունը, ազգանունը, հասցեն, տրման ամսաթիվը,
3. դիմումում սահմանված լինի դիմումատուի պահանջը,
4. բերված լինեն հիմնավորումները, հնարավոր ապացույցները՝ առկայության դեպքում, կցված լինեն դիմումին:

! Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված ***լիազորագիր***: Թեկնածուի, վստահված անձի, լիազոր ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումներին կից պետք է ներկայացվի դիմումատուի կարգավիճակը հավաստող՝ ***սահմանված նմուշի վկայականի պատճենը***:

Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

Դիմումը ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել

- **աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն,**
- **քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն,**
- **քվեարկության օրը՝ ժամը 8.00-ից մինչև ժամը 22.00-ն,**
- **քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ը:**

Վստահված անձն իրավունք ունի ներկայացնելու.

- **վերահաշվարկի դիմում, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը,**
  ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին,
  այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում:

Վերահաշվարկի, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումները ներկայացվում են տարածքային ընտրական հանձնաժողով՝

- **քվեարկության հաջորդ օրը՝** ***ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն,***
- **քվեարկությունից հետո երկրորդ օրը՝** ***ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:***

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումը ներկայացվում է տարածքային ընտրական հանձնաժողով՝

- **քվեարկության հաջորդ օրը՝** ***ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն***
- **քվեարկությունից հետո երկրորդ օրը՝** ***ժամը 9.00-ից մինչև ժամը 18.00-ն***
- **քվեարկությունից հետո երրորդ օրը՝** ***ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:***

Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումները պետք է ներկայացվեն առանձնացված՝

- ըստ Հայաստանի Հանրապետությունից բացակայող և քվեարկությանը չմասնակցած անձանց.
- ըստ Հայաստանի Հանրապետությունում գտնվող և քվեարկությանը չմասնակցած անձանց:

Վստահված անձն իրավունք ունի՝

- **հետևելու քվեաթերթիկների և ինքնասոսնձվող դրոշմանիշների տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին:**

Վստահված անձինք կարող են տպագրության ողջ ընթացքում տպագրատանը հետևել քվեաթերթիկների, ինքնասոսնձվող դրոշմանիշերի տպագրմանը, իրենց միջոցներով ուղեկցել քվեաթերթիկները, ինքնասոսնձվող դրոշմանիշերը տպագրատնից տարածքային ընտրական հանձնաժողով, քվեարկության նախորդ օրը՝ տարածքային ընտրական հանձնաժողովից տեղամասային ընտրական հանձնաժողով, իսկ քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո՝ ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից տարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

Վստահված անձինք կարող են քվեարկության նախորդ օրը տարածքային ընտրական հանձնաժողովում հետևել քվեաթերթիկները, ինքնասոսնձվող դրոշմանիշերը տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացնելու գործընթացին, դրանց պահպանմանը, քվեարկությանը նախորդող և քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում չմիջամտելով հանձնաժողովի աշխատանքներին, հետևել քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:

Վստահված անձն իրավունք ունի՝

- **չմիջամտելով հանձնաժողովի անդամի և տեխնիկական սարքավորումը սպասարկող անձի աշխատանքներին՝ ներկա գտնվելու հանձնաժողովի՝ ընտրողների նույնականացումն իրականացնող, քվեաթերթիկ և քվեարկության ծրար հատկացնող, քվեատուփը հսկող անդամի անդամների և մասնագետի կողքին և հետևելու նրանց աշխատանքներին:**

Վստահված անձն իրավունք ունի՝

- **ընտրական հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու դիտարկումներ և առաջարկություններ:**

Վստահված անձն իրավունք ունի՝

- **ներկա լինել ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում, ձերբակալված անձանց պահելու վայրում, քրեակատարողական հիմնարկում քվեարկության կազմակերպմանը:**

Վստահված անձինք ովքեր ցանկություն ունեն ներկա գտնվելու քրեակատարողական հիմնարկում կազմավորված տեղամասային կենտրոնում անցկացվող քվեարկությանը և/կամ արդյունքների ամփոփման նիստին, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացնում գրավոր հայտ՝ նշելով հայտատուի անունը, ազգանունը, տվյալ ընտրական գործընթացում հայտատուի կարգավիճակը, այն քրեակատարողական հիմնարկի անվանումը, որում կազմավորված տեղամասային կենտրոնում հայտատուն ցանկանում է ներկա գտնվել:

Վստահված անձն իրավունք ունի՝

- **քվեարկության արդյունքներն ամփոփելիս ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, ծանոթանալու քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին, ներկա լինելու քվեաթերթիկների հաշվարկմանը և քվեարկության արդյունքների ամփոփմանը:**

Վստահված անձն իրավունք ունի՝

- **պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում:**

Յուրաքանչյուր կուսակցության մեկական վստահված անձ իրավունք ունի՝

- **պահանջելու ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորման միջոցով տպված տեղեկանքի մեկ օրինակ, որում նշվում են տարածքային ընտրական հանձնաժողովի և ընտրական տեղամասի համարները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում:**

Վստահված անձն իրավունք ունի՝

- **ստորագրելու հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկների փաթեթի վրա:**

Գրանցամատյանում գրառվում են ստորագրողի անուն, ազգանունը, դրվում է ստորագրության նմուշը:

Վստահված անձն իրավունք ունի՝

- **ստորագրելու փակված ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկի վրա:**

Գրանցամատյանում գրառվում են ստորագրողի անուն, ազգանունը, դրվում է ստորագրության նմուշը:

Վստահված անձն իրավունք ունի՝

- **Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստում լուսանկարել կամ տեսանկարահանել ընտրական տեղամասում կազմված քվեարկության արդյունքների արձանագրությունը:**

Վստահված անձն իրավունք ունի՝

- **Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ստանալու ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք (առանց տարածքային ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների տվյալների)՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:**

Վստահված անձը պարտավոր է՝

- ☑ պահպանել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջները.
- ☑ իր լիազորություններն իրականացնել ՀՀ ընտրական օրենսգրքի շրջանակներում և ընտրական օրենսգրքով սահմանված կարգով.
- ☑ գրանցվել ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում՝ ընտրական հանձնաժողովի նիստերին, ինչպես նաև քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար.
- ☑ ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և սահմանված նմուշի վկայական՝ այն տեսանելի ձևով կրելով վերնազգեստի վրա:

Վստահված անձն իրավունք չունի՝

- ☑ միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին.
- ☑ ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ.
- ☑ միջամտելու քվեարկության ընթացքին.
- ☑ օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին:

ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Վստահված անձի՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում:

Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի (իրավունք չունեն) վստահված անձին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ այլ կերպ նրան մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա գտնվելուց, ***բացառությամբ վստահված անձի կողմից Ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքերի, որոնք էապես խաթարում են ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը***:

Ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է վստահված անձին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ***ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:***

Վստահված անձին տեղամասային կենտրոնից կամ հանձնաժողովի նիստերից դուրս հրավիրվելու դեպքում ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով պատճառները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴ ՕՐԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովը վիճակահանությամբ՝

☑ բաշխում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքները.

☑ հարյուրական փաթեթներով առանձնացնում է քվեաթերթիկները և քվեարկության ծրարները.

☑ ընտրական փաստաթղթերը և նյութերը տեղավորում է չհրկիզվող պահարանում և կնքում այն.

☑ կահավորում է քվեարկության սենյակը, որը պետք է ավարտի մինչև ժամը 24.00-ն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Մինչև տեղամասային կենտրոնի բացումը ժամը 7:00-8:00-ն տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն.

- ստուգվում է պահարանին սոսնձված թղթի ամբողջականությունը և ոստիկանության ծառայողներից ընդունվում է չհրկիզվող պահարանը.
- գրանցամատյանում կատարում է գրառում պահարանն ընդունելու մասին.
- իրականացվում է վիճակահանություն հանձնաժողովի անդամների գործառույթներն ու դրանց հերթափոխը որոշելու համար.
- վիճակահանության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում.
- տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ մասնագետը ստուգում է տեխնիկական սարքավորումների աշխատանքը, մուտքագրում է ընտրական

տեղամասի նույնականացման տվյալները և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք.

- տեխնիկական սարքավորման միջոցով տպված գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքը հրապարակվում և սոսնձվում է գրանցամատյանում.
- բացվում է չհրկիզվող պահարանը.
- հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին հանձնվում է նախորդ օրվա վիճակահանությամբ իրեն տրամադրված անհատական կնիքը.
- գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարվում է կնիքի համարը.
- ստուգվում, փակվում և կնքվում է քվեատուփը (առկայության դեպքում՝ նաև շրջիկ արկղը).
- Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների հարյուրական փաթեթներով քվեաթերթիկները և մեկ փաթեթ քվեարկության ծրար (հարյուր հատ) հանձնվում է քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող հանձնաժողովի անդամին (անդամներին.
- ընտրողների ցուցակները հանձնվում են ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամին (անդամներին).
- հարյուր ինքնասոսնձվող դրոշմանիշ հատկացվում է ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամին:

Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ժամը 8:00-ին ընտրական տեղամասը հայտարարվում է բացված և թույլատրվում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

1. Քվեարկության կարգը

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող պետք է գրանցվի: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ ընտրողը չի կարող քվեաթերթիկ ստանալ և քվեարկել:

Յուրաքանչյուր ընտրող մոտենում է մասնագետին և ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթը.

Ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ են համարվում՝

- ☑ *նույնականացման քարտը,*
- ☑ *կենսաչափական անձնագիրը,*
- ☑ *ոչ կենսաչափական անձնագիրը,*
- ☑ *անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից,*

Զինծառայողների համար՝

- ☑ *զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զորամասի կազմված ընտրողների ցուցակում,*

Կալանքի տակ գտնվող և պատիժը կրող՝ ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների համար՝

- ☑ *քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը,*

1.1 Ընտրողների գրանցումը տեխնիկական սարքավորումների կիրառմամբ

Եթե ընտրողը ներկայացրել է.



Եթե ընտրողը ներկայացրել է *այլ անձի անձը հաստատող փաստաթուղթ*, ապա մասնագետն այդ մասին տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:

Եթե ընտրողը գրանցված է տվյալ տեղամասի ընտրողների կում և որպես անձը հաստատող փաստաթուղթ ներկայացրել է.

1. նույնականացման քարտը,
2. կենսաչափական անձնագիրը
3. 2008 թվականի հունվարի 1-ից հետո տրված ոչ կենսաչափական անձնագիրը

և առ այդ պահն անձը հաստատող որևէ փաստաթղթով չի մասնակցել քվեարկությանը

Մինչև 2008 թվականի հունվարի 1-ը տրված ոչ կենսաչափական անձնագիրը

և առ այդ պահն անձը հաստատող որևէ փաստաթղթով չի մասնակցել քվեարկությանը

ԷԿՐԱՆԻՆ ՀԱՅՏՆՎՈՒՄ ԵՆ.

1. տվյալ ընտրողի լուսանկարը,
2. ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը
3. կանաչ նշան

1. ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը
2.կանաչ նշան՝ առանց ընտրողի լուսանկարի

Այն դեպքում, երբ էկրանին հայտնվում է ԿԱՆԱՉ նշան

I. Ընտրողը ներմուծում է իր աջ ձեռքի ցուցամատի մատնահետքը: Դրա անհնարինության դեպքում մատնահետքը ներմուծվում է հետևյալ առաջնայնությամբ՝ ձախ ձեռքի ցուցամատը, աջ ձեռքի միջնամատը, ձախ ձեռքի միջնամատը, աջ ձեռքի մատնեմատը, ձախ ձեռքի մատնեմատը, աջ ձեռքի ճկույթը, ձախ ձեռքի ճկույթը, աջ ձեռքի բթամատը, ձախ ձեռքի բթամատը:

! Մատնահետքը ներմուծելու անհնարինության դեպքում մատնահետքի ներմուծման քայլը բաց է թողնվում:

II. Դրանից հետո տեխնիկական սարքավորումը տպում է ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, քվեարկության կտրոնի հերթական համարը, իսկ թվային շտեմարանում առկա լինելու դեպքում՝ նաև ընտրողի լուսանկարը պարունակող քվեարկության կտրոն:

I. Մասնագետը տպված քվեարկության կտրոնը ընտրողի անձը հաստատող փաստաթղթի հետ վերադարձնում է ընտրողին, որից հետո ընտրողը մոտենում է ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի համապատասխան անդամին:

II. Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում, հանձնաժողովի անդամը իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:

III. Եթե ընտրողը **գրանցված չէ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, ապա էկրանին հայտնվում է ԴԵՂԻՆ նշան**, իսկ եթե տեխնիկական սարքավորման մեջ առկա է համապատասխան տեղեկատվություն, ապա նաև այն ընտրական տեղամասի համարը, որի ցուցակում է ընդգրկված այդ ընտրողը: Նշված դեպքում ընտրողը դուրս է հրավիրվում քվեարկության սենյակից:

IV. Եթե ընտրողն **իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել է քվեարկությանը, էկրանին հայտնվում է ԿԱՐՄԻՐ նշան**, ապա մասնագետը տեղեկացնում է հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահը նման դեպքում քվեարկության սենյակ է հրավիրում ոստիկանության ծառայողներին, որոնք ձեռնարկում են օրենքով սահմանված միջոցներ:

1.2 Ընտրողների գրանցումն առանց տեխնիկական սարքավորումների կիրառման իրականացվում է հետևյալ դեպքերում.

- ☑ զորամասում հաշվառված ընտրողների ցուցակով քվեարկություն.
- ☑ քրեակատարողական հիմնարկում քվեարկություն.
- ☑ շրջիկ արկղով քվեարկություն.
- ☑ քվեարկության օրը կազմվող՝ ընտրողների լրացուցիչ ցուցակով քվեարկություն.
- ☑ տեխնիկական սարքավորման խափանման կամ չլինելու պարագայում՝ քվեարկություն:





2. Քվեաթերթիկ և քվեարկության ծրար ստանալը

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու հանձնաժողովի անդամն ընտրողին տրամադրում է ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար: ***Ընտրողը չի կարող հրաժարվել բոլոր քվեաթերթիկներն ստանալուց:***

3. Քվեարկությունը

Ստանալով քվեաթերթիկը և քվեարկության ծրարը, ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

! Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- ☑ ընտրողն ընտրություններին մասնակցող կուսակցություններից որևէ մեկին **ընտրում է այդ կուսակցության քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու միջոցով,**
- ☑ **տարածքային ընտրական ցուցակի թեկնածուներից որևէ մեկին ընտրելու դեպքում** ընտրողն իր ընտրած **քվեաթերթիկի երկրորդ էջում V ձևի նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմացի քառանկյունում,** որին կողմ է քվեարկում,
- ☑ քվեաթերթիկն **առանց ծալելու** դնում է քվեարկության ծրարի մեջ:

Չօգտագործված քվեաթերթիկները գցվում են քվեարկության խցիկում տեղադրված առանձին տուփի մեջ:

Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, ***որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, այցելու:***

Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն **ՄԵԿ** ընտրողի:

Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրառվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը ***սխալ է լրացրել կամ վնասել է,*** *ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ (Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ՝ ընտրությունների մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ):*

Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկն (քվեաթերթիկներն) անհապաղ մարվում է:

Քվեարկելուց անմիջապես հետո **ԸՆՏՐՈՂԸ՝**

- մոտենում է քվեատուփի մոտ ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին,
- նրան է հանձնում քվեարկության կտրոնը:

4. Քվեատուփի մոտ

Ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի **ԱՆԴԱՄԸ՝**

- ստուգում է կտրոնը, իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել նաև ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը,
- առանց քվեարկության ծրարն ընտրողից վերցնելու քվեարկության ծրարի կտրվածքի միջով քվեաթերթիկին է փակցնում ինքնասոսնձվող դրոշմանիշը,
- բացում է քվեատուփի ճեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեարկության ծրարը գցելու քվեատուփի մեջ:

Եթե ընտրողը *չի ներկայացնում* քվեարկության կտրոն, ապա ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամը տեղեկացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, որն ընտրողից վերցնում է քվեարկության ծրարը, անհապաղ մարում է՝ առանց ծրարի պարունակությունն ստուգելու:

Ընտրողն իրավունք չունի տեղամասային կենտրոնում հայտարարելու, թե ինչպես է քվեարկել:

Քվեարկելուց հետո ընտրողն անհապաղ պետք է դուրս գա քվեարկության սենյակից:

Քվեարկության ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի ՆԱԽԱԳԱՀԸ՝

- մինչև **ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը** տարածքային ընտրական հանձնաժողով հաղորդում է համապատասխանաբար մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը.
- պահպանում է կարգ ու կանոնը տեղամասային կենտրոնում և ապահովում է քվեարկության գաղտնիությունը.
- կարգավորում է ընտրողների հոսքը տեղամասային կենտրոն.
- վիճակահանությունների արդյունքներին համապատասխան ապահովում է հանձնաժողովի անդամների՝ 2 ժամը մեկ պարբերականությամբ հերթափոխը.
- ըստ անհրաժեշտության քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ է տրամադրում հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին.
- ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին հատկացնում է ինքնասոսնձվող դրոշմանիշեր, եթե քվեարկության ընթացքում ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշերը սպառվել են.
- նոր ինքնասոսնձվող դրոշմանիշերի հերթական խմբաքանակն է հանձնում ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամից քվեարկության կտրոնները ստանալուց հետո.
- հաշվում է ինքնասոսնձվող դրոշմանիշ փակցնող և քվեատուփի համար պատասխանատու անդամից ստացած քվեարկության կտրոնները, և թիվն արձանագրում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄԸ

Ժամը 20:00 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության ավարտի մասին և

- ☑ արգելում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ,
- ☑ քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս,
- ☑ փակում է քվեատուփի ճեղքը,
- ☑ փակում է տեղամասային կենտրոնը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է քվեարկության սենյակում:

Քվեարկության արդյունքների ամփոփումն սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և ընթանում առանց ընդհատման մինչև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրության կազմումը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները մինչև քվեատուփը բացելը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ՆԱԽԱԳԱՀԸ՝

- **փաթեթավորում է** հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, փաթեթը կնքվում և տեղադրվում է պարկում.
- **հաշվում է** ընտրողների ցուցակում ընտրողների ստորագրություն-ների հիման վրա քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը
  - Առկայության դեպքում **առանձին հաշվում է նաև՝**
    - ☑ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակում առկա ստորագրությունների թիվը,
    - ☑ շրջիկ արկղով քվեարկությանը մասնակցած ընտրողների լրացուցիչ ցուցակներում առկա ստորագրությունների թիվը:
- Այդ թվերը հրապարակվում և արձանագրվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:
- Հանձնաժողովի նախագահը գրանցամատյանում արձանագրված՝ ընտրական տեղամասում քվեարկության մասնակիցների ընդհանուր

թիվը կապի հնարավոր միջոցներով անհապաղ հայտնում է տարածքային ընտրական հանձնաժողով:

- Եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորման միջոցով տպում է տեղեկանք, որում նշվում են տարածքային ընտրական հանձնաժողովի և ընտրական տեղամասի համարները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Տեղեկանքը պետք է պարունակի նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով:
- Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում այդ մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:
- Տեղեկանքի մեկ օրինակը, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, տեղադրվում է պարկում:
- Տեղեկանքի մեկական օրինակ, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, ըստ պահանջի տրամադրվում է ամփոփման նիստին ներկա գտնվող թեկնածուներին, դիտորդներին և ընտրու-թյուններին մասնակցող կուսակցության մեկական վստահված անձի:
- Ընտրողների ցուցակները (բացառությամբ զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ընտրողների ստորագրված ցուցակների) տեղադրվում են առանձին պարկում (փոքր պարկ), փոքր պարկը փակվում է, պարկի վրա ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, պարկը կնքվում է և պարկի վրա գրվում է ընտրական տեղամասի համարը:
  - *Զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ընտրողների ստորագրված ցուցակները փաթեթավորվում են առանձին, փաթեթը կնքվում է և տեղադրվում ոչ թե այդ, այլ փաստաթղթերի մեծ պարկում:*

- **Հաշվում է** ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթները կնքում և տեղադրում է պարկում:
- **Հաշվում է** ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթները կնքում և տեղադրում է պարկում:
- **Հաշվում է** չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերը, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում:
- **Հաշվում է** չօգտագործված համարակալված քվեարկության կտրոնները, փաթեթավորում, փաթեթը կնքում և տեղադրում է պարկում:

  Համարակալված քվեարկության կտրոնները չօգտագործվելու դեպքում դրանք չեն հաշվվում, և նշվում է տարածքային ընտրական հանձնաժողովի հատկացրած կտրոնների թիվը:
- **Առանց հաշվելու փաթեթավորում է** չօգտագործված քվեաթերթիկները և սահմանված կարգով ներկայացնում տարածքային ընտրական հանձնաժողով:

Այդ գործողությունների արդյունքները հրապարակվում են և արձանագրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Քվեաթերթիկների տեսակավորումը

- Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը.
- քվեատուփից հանում քվեարկության մեկ ծրար.
- ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար.
- քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը:

Քվեարկության ծրարի մեջ մեկից ավելի քվեաթերթիկներ գտնվելու դեպքում **հաշվարկում ընդգրկվում է** միայն սահմանված նմուշի քվեաթերթիկը, այսինքն՝ հաստատված նմուշի քվեաթերթիկը, որի վրա փակցված է այդ ընտրական տեղամասի ինքնասոսնձվող դրոշմանիշը:

Ավելորդ գրառում պարունակող քվեարկության ծրարի դեպքում քվեաթերթիկը ծրարից չի հանվում, քվեարկության ծրարը դրանում գտնվող քվեաթերթիկի հետ անհապաղ մարվում է:

Հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի՝

- սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին,
- վավեր կամ անվավեր լինելու մասին:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ընտրությունների դեպքում սահմանված նմուշի քվեաթերթիկն **ԱՆՎԱՎԵՐ Է, եթե ներառում է ավելորդ գրառում:**

Քվեաթերթիկները տեսակավորելիս՝ հանձնաժողովի նախագահը՝

- քվեաթերթիկը ցուցադրվում է այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար.
- պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին.
- հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն.
- առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը.
- քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության, կուսակցությունների դաշինքի օգտին քվեարկած կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ:

Այս գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար:

Վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է կուսակցության անվանումը, որի օգտին է քվեաթերթիկը.

- յուրաքանչյուր կուսակցության օգտին քվեարկված քվեաթերթիկ-ները և անվավեր քվեաթերթիկները տեսակավորվում են առանձին-առանձին.
- քվեաթերթիկներն ըստ կուսակցության օգտին քվեարկված քվեաթերթիկների տեսակավորելուց և հաշվարկելուց հետո ստացված թվերը բարձրաձայն հայտարարվում և գրանցվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր կուսակցության վավեր քվեաթերթիկները տեսակավորելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովը (ըստ առավել թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած կուսակցությունների) հաշվարկում է կուսակցության տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը:

Այդ նպատակով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քվեաթերթիկի երկրորդ էջում կատարված նշումի համաձայն, հայտարարում է, թե կուսակցության տարածքային ընտրական ցուցակի որ թեկնածուի օգտին է քվեարկված:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե քվեաթերթիկը երկրորդ էջում՝

- ներառում է մեկից ավելի թեկնածուների օգտին նշումներ
- որևէ նշում չի ներառում
- ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված V ձևը

ապա քվեաթերթիկը մնում է միայն կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթում:

Այս գործողությունը կրկնվում է յուրաքանչյուր կուսակցության օգտին քվեարկած բոլոր քվեաթերթիկների համար:

Նշված կարգով յուրաքանչյուր կուսակցության քվեաթերթիկները տեսակավորելուց հետո հաշվարկվում է այդ կուսակցության տարածքային ընտրական ցուցակի յուրաքանչյուր թեկնածուի օգտին քվեարկված քվեաթերթիկների թիվը, բարձրաձայն հայտարարվում և գրանցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Բոլոր կուսակցությունների քվեաթերթիկները տեսակավորելուց հետո յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի կողմ քվեարկած քվեաթերթիկները փաթեթավորվում են միասին:

Տեսակավորման ողջ ընթացքում հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ և նշումներ կատարելու այլ առարկաներ:

Քվեարկության արդյունքների ամփոփման արձանագրության կազմումը տեղամասային ընտրական հանձնաժողովում

Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն: Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից **12 ԺԱՄ** հետո:

Արձանագրությունը կազմվում է 4 օրինակից.

- ☑ **1 օրինակը** փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին.
- ☑ **1 օրինակը** տեղադրվում է ընտրական փաստաթղթերի պարկում.
- ☑ **2 օրինակը** ներկայացվում են տարածքային ընտրական հանձնաժողով:

*Արձանագրությունը **ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՆ** հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները, **ԿՆՔՈՒՄ Է** հանձնաժողովի նախագահը:*

Արձանագրության մեկ օրինակը ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկում տեղադրելուց հետո պարկը պետք է փակվի: **Պարկը փակելու համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:**

Քվեարկության ավարտից հետո ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում տարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում՝

- ☑ ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը.
- ☑ ընտրողների ստորագրված ցուցակների պարկը.
- ☑ չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը.
- ☑ չօգտագործված քվեաթերթիկները.
- ☑ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը.
- ☑ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը.
- ☑ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը.
- ☑ տեխնիկական սարքավորումը (սարքավորումները).
- ☑ քվեատուփը (քվեատուփերը),
- ☑ շրջիկ արկղը (առկայության դեպքում).
- ☑ քվեարկության խցիկները:

Ընտրական փաստաթղթերը տարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ: Վստահված անձինք կարող են իրենց միջոցներով ուղեկցելու ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից տարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ

Տարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմման վավերականությունը, իսկ թվաբանական սխալների առկայության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:

Ելակետային փվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված փվյալները:

Տարածքային ընտրական հանձնաժողովում նշում է կատարվում տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության ընդունման ամսաթվի և ժամանակի մասին, ինչը վավերացվում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով:

Տարածքային ընտրական հանձնաժողովը համեմատում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի համարը տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության կնիքի համարի հետ:

Տարածքային ընտրական հանձնաժողովը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան **3 ԺԱՄԸ** մեկ տպում է քվեարկության արդյունքների աղյուսակավորումը:

Աղյուսակավորումը, վավերացված տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, անհապաղ փակցվում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ տարածքային ընտրական հանձնաժողովն ավարտում է քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան **20 ԺԱՄՎԱ** ընթացքում: Տարածքային ընտրական հանձնաժողովն աղյուսակավորում է քվեար-

կության արդյունքները՝ ըստ ընտրական տեղամասերի, ինչպես նաև գումարային արդյունքների:

Տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների աղյուսակավորման վերջնական օրինակը, վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով, անհապաղ փակցնում է հանձնաժողովում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորման մեկ օրինակ՝ վավերացված հանձնաժողովի նախագահի (տեղակալի) և քարտուղարի ստորագրություններով ու հանձնաժողովի կնիքով:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովն ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը քվեարկության ավարտից **24 ԺԱՄ** հետո ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ **ԺԱՄԸ 12.00-ԻՑ ՍԿՍԱԾ**, իրականացնում է ընտրողների ցուցակների սկանավորում, որին կարող են հետևել ընտրական հանձնաժողովների անդամները, թեկնածուները, վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Ընտրողների ցուցակները սկանավորվում են այնպես, որ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հաշվառման վայրի հասցեն, ինչպես նաև ընտրողի ստորագրության, ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի անհատական կնիքի համար նախատեսված սյունակները լինեն տեսանելի:

Ընտրողների սկանավորված ցուցակները ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքներն սկսվելուց **24 ԺԱՄ ՀԵՏՈ** պաշտոնապես հրապարակվում և ներբեռնելու և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա քվեարկության ավարտից ոչ ուշ, քան **24 ԺԱՄ ՀԵՏՈ**, ամփոփում է Ազգային ժողովի ընտրության քվեարկության նախնական արդյունքները, արձանագրությամբ վավերացնում դրանք:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ քվեարկության արդյունքների վերաբերյալ:

* * *

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ և անհատական որոշումները տեղադրված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում **www.elections.am**:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3
ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ 11
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ.....12
ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ 14
Քվեարկության կարգը 14
Ընտրողների գրանցումը տեխնիկական սարքավորումների կիրառմամբ 15
Ընտրողների գրանցումն առանց տեխնիկական սարքավորումների կիրառման իրականացվում է հետևյալ դեպքերում. 17
Քվեաթերթիկ և քվեարկության ծրար ստանալը 19
Քվեարկությունը 19
Քվեատուփի մոտ 21
ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄԸ 23
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ 23
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ..... 30
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ 32